

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԳՐԱՆՑՈՒՄ ԺՈԶԵՖ ՕԴԻՖՐԵԻ ՄՐՑԱՆԱԿԸ

Մեր հալրենակից մեծ. պ. Մ'քանչէլ Թամամշեանը Փարիզից գրում է «Նօվօէ աբաղրենիէն լրագրին».  
«Այս օրերս Ֆրանսիաի բարոլագիտական և քաղաքական ուսմանց ճեմարանը Դիարբէքիրի ֆրանսիական փոխհիւպատոսի կնոջ Մէլրիէին լատկացրեց Ֆրանսուա-ծօզէֆ Օդիֆրէի 15,000 ֆրանկի մրցանակը, որ սրոշուած էր տալ ամենաանձնուրաց մարդուն Տիկին Մէլրիէին արժանի է կացուցել իրան արդ մրցանակին իւր հերոսական կեանքով և անձնուրացութեամբ՝ 1893 և 1896 թուերի հալկական կոտորածների ժամանակ։»

Ազգային լուսաւորութեան նախարարութեան բարձրագուն կրթութեան բաժնի կառավարիչ պ. Լիարը, որին լանձնուած էր մրցանակ ստացողների մասին զեկուցում ներկալացնել, ա. Մէլրիէի մասին հեանեալն է ասում։

«Արենային գազանութիւններից լիտոլ երեք հարիւր հաւեր դիմեցին Հիւպատոս Մէլրիէին խնդրելով իւր վերականենել նոցա անմիջական պաշտպանութիւնը և օգնել իրանց մինչև ծովափը հասցնել, Հիւպատուը, կատարելապէս կարեկցելով թշուառներին վախեցաւ թէ մի գուցէ իւր տեղից հեանալով նոր վայրագութիւններ կատարուին, ալդ միջոցին Հիւպատոսի կինը առաջարկեց որ ինչն անձամբ և իւր հրակողութեամբ կամացնէ նոցա մինչև նաւահանգիստ։ Մինչև մօտակալ ծովափը, Միջերկրական ծովի Ալեքսանդրէտը, 15 օրուաւ ճանապարհ էր ծիով։ Տիսուր տեսարան էր ներկակացնում ճանապարհը, զիւղերն աւերուած էին, ամենուընեք կամականութիւն էին անում քուրդերը։ Տ. Մէլրիէին վերցրել էր իւր հետ նաև իւր փոքրահասակ չորս երեխաներին, որոնցից վերջինը ծծի էր, և սկսեց ալդ վտանգալից ճանապարհորդութիւնը։ Դիարբէքիրի նահանգապետը Հիւպատոսի կնոջ առաջարկեց, քաւց միան նորան, պահնորդ. քաջ կինը լաւտնեց, թէ պահնորդը պէտք է պահպանէ ամենքին, ալլապէս նա չէ կարող լնդունել։ Որպէս զի ստիպէ պահնորդ ոստի-

կաններին ամբողջ քարվանը պահպանել, առ Մէկրիէն իւրերեխաներին պատզարակով ուղարկում է քարվանի լառաջապահ մասը, իսկ ինքը ծիով հետևում է քարվանին, երբեմն երբեմն թեքուելով պատզարակի վերակ որ ծեծ տալ երեխալին, շանգիստ առնելոյ դպրում հերոսուհին հողում էր սնունդի և գիշերելու մասին, նա արիանում է և զիշերները, դիտելով ուղարկուներին և հանգստացնելով զժբախտներին:

Իւրէջիկում, ուր պէտք էր նիրատն անցնել, տեղական տաճիկ իշխանաւորները լատնեցին առ Ա. Մէկրիէն, որ Կ. Պօլսից հրաման է ստացուած թոլլ տալ անցնելու Ֆրանսիալի հիպատոսի կնոջ, պնդելով, ամս հիման վերակ, որ բոլոր մացողները պէտք է արգելուին, Բայց ոչ մի բան չէր կարող առ Մէկրիէն կամքի դէմ գնել, նա կարգադրում է իւր երեխաներին անցացնել միւս ամբ, լատնելով, թէ ինքը ամենից վերջը կանցնի, երբ բոլոր իւր հետ եկողները միւս ամին կը լինին արդէն, Տաճիկ իշխանաւորների դողը բռնեց, եթէ նոքա արգելեն անցնելը և արդպիսով դուցէ պատճառ. լինին նորա մանկան մահուան առանց ծծի մասու պատճառով, լանցաւորը սաստիկ կպատժուի, Քաղաքապետը դիջանում է, և ամրող գաղութը լաջողութեամբ անցնում է նիրատը:

«Եւ ալսպէս, ճանապարհի րուր վտանգների մէջ, որ լի էր վարագ քուրողերի և չերքեսների խմբերով, ուղեարները հասնում են ծովափ. առ Մէկրիէն բոլորին տեղաւորում է շոգենաւոր և ինքը ամենից վերջը ենուու է տախտակամած,

«Մեղ թւում է, — կորափակում է Լարը, — անվիճներ առ Մէկրիէն ալսպիսի ծանր ճանապարհների մէջ կարողացաւ արժանապէս ներկալացնել ֆրանսիան որպէս քաջ, մեծանողի և կարեկցող, և կատարելապէս արժանի է Օդիֆրիէի «Քարձր անձնաւորութեան» մրցանակին»:

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑ Ս. ԼՈՒԻԶԻ ԱՃ- ԽԱՐՀԱՆԴԻՍՈՒՄ

Ամերիկայի Հայ զաղութիւ առաջնորդ Տ. Յովսէփ եպիսկոպոս Առուաջնանը դիմելով Ազգիս որբաղնադուն Հայրապետին լաւագաղի ալամում է, որ ինչպէս 1893 թւուին Ամերիկայի Զիքազո քաղաքում կատարուած աշխարհանդիսի մէջ տեղի ունեցած կրօնական համաժողովին հայ եկեղեցին ևս իւր կալացուցիչն ունէր լանձին պ. Մինաս Զերազի, հանգ. Յ. Խաչումբանի և ալլոց, որ պատուաբեր եղա. թէ լողիանուուր հայ ազգին և թէ մասնաւորապէս Ամերիկայի հայ գաղթականութեան, ալսպէս էլ առաջիկալում Մէնտ Լուիզ քաղաքում տեղի ունենալիք աշխարհանդիսի Մամուլի համաժողովի»

մէջ ցանկալի է, որ հոլ աղդի և եկեղեցու գրականութեան գոհարները հանդէս բերող արժանաւոր ներկալացուցիչ գանուի աղդի կողմից ընտրուած կամ ընդհանուոր հայ մամուլի կողմից ընդունուած։ Ա. Սառաջեանը խնդրում է վեհին, որ բարեհաճէ ալդ մասին կարեոր կարգադրութիւնն անել։

### Կ. ՊՈԼՄԻ ԱԶԳԱՑԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՈՐԲԱՆՈՑԸ

Թէե մենք, ուսւահակերս, միշտ սովոր ենք բարձրից նալել տաճկահակերի վրայ և մեր քաղաքակրթութիւնը գերազանց, սակայն երբեմն զգալով մեր մնամատութիւնը, պէտք է ամօթահար լինենք օրինակ. արդեօք մենք ունինք կ. Պոլսի Ա. դ. գ. ա. ի. ն հ. ի. ա. ն դ. ա. ն ո. ց. ի. պէս մի մարդասիրական-հալկական հաստատութիւն։

Ամեն տարի հանդիսով տօնւում է կ. Պոլսում ալդ պատկանելի հիմնարկութեան տարեդարձը, որ բացի իսկական հիւանդանոցի և տուկ քաժանմունքներից, ունի և հոգեկան հիւանդութիւնների քաժանմունք, ուր Տաճկաստանի ամեն կողմից բերուած հակ հոգեկան հիւանդներն ապաստան են դըմում և ազատում փողոցներում անտէր թափառելուց, ինչպէս որ տարարադդաբար սովորութիւն է դարձել մեզանում Այս անգամ մենք մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում ալդ հիմնարկութեան ալն քաժանմունքի վրայ; ո՞ր որբանոց է կոչւում: Այս տարի ալդ որբանոցի դպրոցից ուսման շրջան սւարտել են 14 հոգի, իսկ 16 հոգի աւարտել են արհեստների քաժանմունքից: Որբանոցն ունի 5 արհեստանոց՝ կօշկակարութեան, դերձակութեան, աթոռագործութեան, կահագործութեան և սստախանկութեան: Մինչև աժմ կօշկակարութիւն սովորել են 30 տղալ որբանոցից 15 դուրսը գործադնելով՝ թողել են հիմնարկութիւնը: Դերձակութիւն սովորել են 12, աթոռագործութիւն՝ 18, սստախանկութիւն՝ 12, կահագործութիւն՝ 10. 1899 թ. մինչև ալսօր 82 հոգի արհեստ են սովորել: Աժմ միմիան արհեստով պարապում են 47-ը, իսկ 52 աշակերտ էլ օրական մի ժամ է արհեստով դրազում: Որբանոցի արհեստաւոր աշակերտները պատրաստել են 3,177 զուգ կօշիկ, որից 1,860 զուգը հիւանդանոցի լանձնարարութեամբ, իսկ 1317 զուգը մասնաւոր անձանց և վաճառելու համար: զուտ արդիւնք մնացել է 11,546 զրշ. Դերձակութիւն սովորողները կարել են 690 ձեռք զգեստ, որից զուտ արդիւնք մնացել է 2,826 զրշ. Աժոռ շինողները պատրաստել են, 1,234 աթոռ, որից զուտ արդիւնք մնացել է 4,975 զրշ. Սստախանանկները պատրաստել են 568 խաւլու, 408 զուգ դենջակ, 382 անձեռոց, 315 մետր զոգնոցի կտաւ, 108 մետր առխումա կտաւ, 1,035 մետր զիշերանոցի կտաւ:

315 մետր շրջադպիսատի կտաւ. և ալլն. Մէկ խօսքով՝ արհեստներ սովորելուց կետու արդ իրեղէններից զուտ արդիւնք է մը-նացել մօտ 1300 մանէթ. Աչս տարի աւարտող արհեստաւոր-ներից 2 զօլսեցի են, 1 պղուսացի, 1-ը նիկոմիդացի, իսկ միւսները գաւառներից. Որբերի մաքրութեանը հսկում են 6 գին. շաբաթը մի անգամ բաղնիք են գնում. ամառուալ ըն-թացքում մէկոկէս ամիս ծովի ջրումն են լողանում.

Պատրիարք սրբազն Օրմաննեանը գովիճի հետևղակա-նութեամբ ամեն կերպ աշխատում է, որ որք տղաները ուս-ման հետ իմաստին մի արհեստ սովորեն, որպէս զի կեանքի մէջ մտնելով՝ մի կտոր հաց վաստակեն իրենց ճակատի քը-տինքով. ուրախալի երեսիթ.

### ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԲԱՌԱՐԱՆ

Մեր աշխարհաբար գրական լեզուի երկու ճիւղաւորու-թիւններն էլ՝ թէ արենելեանը և թէ արևմտեանը զուրկ են դեռ. ևս մշակուած լեզուների կանոնաւորութիւնից. երկուայի քերականութիւնն ևս հաստատուն հիմքերի վրայ չէ դրուած և արդ պատճառով աշխարհաբար լեզուի կանոնաւոր ուսու-ցումը մեծ դժուարութեանց է հանդիպում. թէ մեզանում և թէ կ. Պօլսում՝ արդէն կարիք է զգացում աշխարհաբար գործածական գրական լեզուն որոշ հիմքերի վրայ դնելու և կամալականութիւններին փերջ դնելու. հետզհետէ ուսումնա-սիրում են գաւառաբարբառաները առանձին-առանձին իրեն լեղուաբանական հում նիւթ. Դրանց հետեղ աշխատութիւնը պէտք է լինի համեմատական ուսումնասիրութիւնը և որոշ համակարգութեան բերելը.

Ինչ վերաբերում է լեզուի ճոխութեանն ու բառերի պա-շարին, տաճկահակերը մեղանից առաջ են. նրանց գրական լե-զուն աւելի առաջգական, ոճաշատ և կոկ է քան թէ մերը. Պօլսում լուրջ ուշադրութիւն են դարձնում մալրենի լեզուի մշակութեան վրայ և ինչպէս ալժմ հաղորդում են կ. Պօլսի լրագիրները, նզմիրեան գրական լանձնաժողովի նախաձեռ-նութեամբ լատուկ մասնաժողով է կազմուել՝ աշխարհ հա-բար լեզուի բառարան լորինելու համար՝ կէտ նպա-տակի ունենալով ծատել գրաբարէն փոխառնուելիք կանոն-ները, ոճերը, ասացուածները, ընարել գաւառական բառա-մթերքը, եւրոպական լեզուներէ փոխառութիւնները, կոկել, լստակել արդի հայերէնն ու բերել զալն արեմտեան լեզուաց սեղմ և հատու ճշտաբանութեանց.

Որչափ որ ալդպիսի մի լուրջ աշխատութեան համար այմետան հանգամանքներն աննպաստ են, ալնչափ ևս խընդ-

Դի կարևորութիւնը ստիպողական է դարձնում պլազիսի մի ձեռնարկութիւն. ցանկալի էր, որ Պօլի մասնաժողովն ուշադրութիւն դարձնէր նաև մեր, ուստահարոց, գրական լեզուի վրա և ըստ կարելոյն աշխատէր մօտեցնել ոշխարհաբարի երկու դիմաւոր ճիշդերը. Այդ գործն աւելի հեշտութեամբ զլուխ կզար, եթէ միաժամանակ նոյնպիսի մի մասնաժողով ևս կազմուէր մեղանում և երկու մասնաժողովներն ևս միևնուն ծրագրով և ուղղութեամբ առաջ տանէին իրենց աշխատանքը, որ թեթև գործ չէ և տասնեակ տարիների քրտնաշան զբաղմունք է պահանջում.

Կ. Պօլի մասնաժողովի անդամների անուններն երաշխաւորում են, որ գործն անկատար չի մնալ և մի որոշ հետեւանք կունենալ. ահա ալդ լաւոնի անուանց ցուցակը. 1) պատրիարք սրբազն Օրմանեան, 2) Եղիշէ եպիսկոպոս Գուրիեան, 3) Ռէթուս Պէրպէտեան, 4) Յակոբ Գուրգէն, 5) Հրանտ Աստուր, 6) Թովմաս Թէրզեան, 7) Պրօֆ. Յակոբոս Ճէճիզեան, 8) Գաբրիէլ Վարդապետ Մէնէլիշեան, 9) Պոկտոր Թորգոմեան, 10) Բարթող Թէլեան, 11) Յովսէփ Եսուսուֆեան և 12) Բիւղանդ Քէնիան. Մասնաժողովը գործում է սրբազն Օրմանեանի նախագահութեամբ և պէտք է ունենալ նաև զաւուական աշխատակիցներ։

Յաջողութիւն ենք ցանկանում։

### ՏԵՍՉԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խրագիրներից լաւոնի է մեր ընթերցողներին, որ վերջին տարիներս, ազգիս Վեհ. Հայրապետը, ցանկալով որ մեր թեսական հոգեոր դպրոցների տեսուչները հոգևորական անձինք լինին, հրամալել է հոգաբարձութիւններին ընտրել կարող հոգևորականներ տեսչական պաշտօնի համար։

Վեհափառի ալս հրամանը վաղուց արդէն գործադրում է Շուշուակ և Երևանի թեմական դպրոցներում, որոնցից առաջնում տեսուչ է բարեշն. Բննիկ Վարդապետը և վերջինում ներկալում լնարուած է բարեշն. Տիրալը վարդապետը, երկուսն էլ մեր կուսակրօն երիտասարդ լաւագորն հոգևորականներից։

Նոյնպիսի հրաման արձակուած էր նաև Ներսիսեան Դպրոցին, որի Հոգաբարձութիւնը մինչեւ ալժմ կատարած չըլլինելով սրբազնազուն Հայրապետի կոնդակը՝ անցեալ լունիս ամսին կամենաւով աշխարհական տեսչին պահել իւր պաշտօնում՝ որոշեց մի նոր պաշտօն ստեղծել՝ րէկտօրի պաշտօն, որի համար և ընտրեց բար. Գարեգին վարդ. Յովսէփեանին։

Որովհետեւ ալս տեսակ պաշտօն գործթիւն չունի դպրոցի

կանոնադրութեան մէջ՝ ուստի և վեհափառ Հայրապետը, ինչ-  
պէս լսում ենք, մերժելով շնդաբարձութեան ախ որոշումը ու-  
ընտրութիւնը, մի նոր կոնդակով պատուիրել է համաձայն-  
դպրոցի կանոնադրութեան միմիան տեսուչ ընտրել մի ալ-  
եկեղեցական, առանց բեկատի պաշտն ստեղծելու։  
ինչպէս լսում ենք, շուտով հոգենոր տեսուչ կնշանակուի  
նաև ն. Նախիջնանի Հօգենոր Դպրոցում։

### ՄԻ ՆՈՐ ԴՊՐԵՎԱՆՔ

Արմաշու զպրեվանքի փալուն հետեանքները հանրածա-  
նօթ են. ալդ զպրոցն աւարտած մի խումբ երիտասարդ կու-  
սական եկեղեցականների զործունէութիւնը մի նոր շրջան է.  
կազմում տաճկահաւերի հոգենոր ասպարիզում, թէ զաւանե-  
րում և թէ Պօլսու Արմաշականներն եռանդուն զործունէու-  
թիւն են ցոյց տալիս և համակրելի ուղղութեամբ աշխատում,  
Այս օրինակից խրախուսուելով՝ կեսարիո գործունեալ առաջ-  
նորդ Տրդատ եպիսկոպոս Պալեանը ձեռնարկել է կեսարիո ս.  
Կարապետ վանքի Հարժարանը զպրեվանքի վերածել, որպէս  
զի իւր թեմի համար կրթուած և բանիրուն հոգեորականներ  
պատրաստէ. ուսում առած հոգեորականների պահանջն ալժմ  
ունպէս կարենոր և անհրաժեշտ է, որ մենք ուրիխութեամբ  
ողջունում ենք ուսումնասէր շառաջնորդի ձեռնարկութիւնը։

### ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ԴՊՐԵՆՈՑ

Բարեկայատակ Մկրտիչ Սանասարեանի կարինում հիմ-  
նած զպրանոցի տեղափոխութեան խնդիրը դեռ ևս չէ վեր-  
ջացել և կ. Պօլսի հաւ մամուլը շարունակ զբաղուած է ալդ  
հարցով. Տեղափոխութեան խնդիրը առիթ է տուել և զբա-  
ղուելու ալդ դպրանոցի որչափով օգտ սկար լինելու խորհրդա-  
ծութիւններով. Թեր և դէմ գրուած բազմաթիւ լոդուածներից  
երեսում է, որ Սանասարեան զպրանոցի նշանակութիւնն հե-  
տըզ ետէ աւելի լաւ են ըմբռնում տաճկահաւերը և զրա հա-  
մեմատ պահանջներ անում.

Հատերը արանջում են, որ Սանասարեան զպրանոցը  
մինչև ալժմ աչքի ընկնող արդիւնք չցոյց տուեց և լանցանքը  
ձգում են զպրանոցի երեք տեսուչների վրաւ. Սակալն հրաշք-  
ների զարն անցել է և առնական անքարեմութիւն է հրաշք-  
ներ պահանջնել մի դպրանոցի ղեկավարներից, որոնք գործում  
են ասիական Տաճկաստանում. այն քաղաքական դրութիւնը,  
որ ստեղծուեց վերջին ուսւածկական պատերազմից կատա-  
Տաճկաստանի հալաբնակ նահանգներում, ինքն ըստ ինքեան-  
պէտք է ամենամեծ արգելքը լինէր զպրոցական կեանքի իւա-

ղաղ և անվրդով զարգացմանը, Ընդհակառակը պէտք է կարծել, որ դպրանոցի ղեկավարների քսղագական հասունութիւնն էր այն պատճառներից մէկը, որոնց շնորհիւ լաւտնի շփոթութեանց միջոցին անգամ արդ դպրանոցը կարողացաւ պահպառնել իւր զոլութիւնը. Ալդպիսի անաջող պարմաններում զբանուղիւ կրթական մի հիմնարկութիւնից չի կարելի մնեն մեծ պահանջներ անել և սրան կատ նրան մեղաւոր ճանաչել, նմանաւանդ, որ հիմնարկութեան վարիչներն իրեն դործի ճամար պատրաստուած, մասնագէտ անձինք են, և ամենասերտ կապերով Կապուած հիմնադրի լիշտակի հետ.

Սանասարեան դպրանոցի արինից տեղափոխելը ոմանք բացատրում են այն հանգամանքով, որ խնամակալութիւնը դժոն է կարսեցիների բռնուծ դիրքեց, ոմանք էլ պատճառաբանում են, թէ Խարթերդում բողոքականութիւնը շատ է տարածում և մի կանոնաւոր զպրոցական հաստատութեան շնորհիւ կաւալի է զաւանափոխութիւնն առաջն առնել. Սակայն մեզ մւում է, որ խնամակալութիւնն աւելի լուրջ և դպրանոցի պարագային վերաբերեալ էսկան խորհրդածութիւնների վրա հիմնուելով է ալդպիսի մի կարգադրութիւն անում և չէ սխալուում.

Խնամակալութեան որոշմամբ զպրանոցը պէտք է տեղափոխուի Խարթերդ և զպրոցական նոր շէնքը պէտք է կառուցուի, ոչ թէ քաղաքում, ալլ քաղաքից երեք ժամացափ, հետու գտնուող Սորսորի կոչուած վանքում, որ գտնուում է մի բլուրի վրա. վանքի շորջը տարածուած են բազմաթիւ հալաբնակ գիւղեր, Ալդպիսով ուրիմն Սորսորի վանքն ամեն լատկութիւնն ունի, իւր մէջ մի զպրոցական հաստատութիւն խաղաղ ու անվրդով զարգացնելու համար, սակայն զպրոցը կարող է լինել միան գիշերօթիկ. Արթեեկ աշակերտների համար փակ կլինին Սանասարեան զպրանոցի գոները. Ակս հանգամանքը հարկաւ աղղեցութիւն կունենալ աշակերտների թուի վրա. եթէ սրան աելացնենք և այն իրողութիւնը, որ բացի որոշ թուով ծրիաթոշակ աշակերտներից, մնացածները պէտք է տարեկան երկու հարիւր մանէթից աւելի վճարեն, հետեւանքն այն կլինի, որ զպրանոցում համեմատարար սակաւաթիւ աշակերտներ կլինի, որ ցան կալի չէ:

Որպէս զի Սանասարեան զպրանոցը մասնաւոր զպրոցի կերպարանք չունենա և ընդհանուրին մատչելի լինի, պէտք է հասարակութիւնը նիւթական օդնութեան համէ, որ ծրիափարժների թիւը հետզհետէ շատանալ և վարչութիւնն էլ կարողանալ գիշերօթիկներից պահանջուած երկու հարիւր բութին իջցնել գոնէ մի հարիւրի. Ալդպիսի հանգամանքներում միայն և անասարեան զպրանոցը կարգարացնէ հանգուցեալ հիմնադրի տածած լուսերը և Տաճկահալաստանում այն զերը կխազալ, ինչ գեր որ խաղացել է Ներսիսիան զպրանոցը Ռուսակալաստանում:

## ՀԱՐԵՔԱՑ ՎԱՆՔԻ ԿԸԼԱԽԱԾՆԵՐԸ

Յալոնի է, որ մեր վանքերից շատերը մնամեն կալուածներ ունին, որոնք կառավարում են վանահայր վարդապետներով։ Ազդ կալուածներից շատերը վիճելի են և մի քանի տասնեակ տարիներով գէճները շարունակւած են ալս և այն անձանց կամ հաստատութիւնների հետո Բաց քանիօն են ալր վարիչներից անձնուրացութեամբ առաջ տանում իրանց գործը և ցանկալի վախճանին հասնում Դեռ երեկ էր, որ լրադիրները հիացմամբ նկարագրում էին մի ծերունի կեանք Պողոս վարդ։ Տէր-Մարդարեանցի, որ ամբողջովին նուիրուած էր Հազարծի վանքի կալուածական դատին և որ ուրախութեան աւետիքն ստանալուց ինտոք միան համրեցաւ, ալսօր նորա շնորհիւ Հաղարծինը տիրապետում է բնտարձակ և թանկազին կալուածի, որ արդինաբերող ձեռքերի է կարօտ։

Զենք կարող չլիշտատկել ալստեղ, որ ճիշտ լար և նման հանգ։ Պողոս վարդապետի՝ Զարեքալ Վանքի լանամաւալ կալուածների դատին էր նուիրուած նորա վանահայր Տ. Աստուածատուր վարդապետը, որ երկու տասնեակ տարիներից ի վեր, կրօնաւորութեան առաջին օրից, կ'անքը դժմէ և այդ վանքի պահպանութեանը. և ալսօր, ինչպէս հաղորդում են մեզ հաստի աղբիրներից, բարձրագոյն Ատեանը Պ. Բուրգում գործը վճռել է լոգուտ վանքին և չնրիւ Աստուածատուր վարդապետի տևական և եռանգուն աշխատութեան Զարեքալ վանքի սեպհականութիւն է ճանաչուած մի ալնպիսի կալուած, որ իւր ընդարձակութեամբ, բերրիութեամբ և անտառների խտութեամբ, կարծում ենք, գերազանցում է մեր վանական շատ կալուածներից։

Յօդուած մամուլի տակ էր արդէն, երբ լրագրներում ապուած հեռագիրը գումար, որ անլատ աւաղակներ սպանել են Աստուածատուր վարդապետին։

## ՏԱՃԿԱՑԱՑ ԹԱՑՐՈՒՆԻ ՊԱՑՄՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐ

## ՆԱՄԱԿ ԽՄՔԱԳՐՈՒԹԵԱՆ:

Ինչպէս Ազգ. Լրագիրներու մէջ ծանուցուած է, առաջադրած եմ հաւաքել Տաճկահայերու բեմական գործունէութեան վերաբերեալ նիւթեր և տեղեկութիւններ։ Այս նպատակով ներկալիս կը կցեմ հարցարար մը նոյն հարցումներու վարդով կազմելու համար հայ գերասաններու կենսագրութիւնը, իրըն գլխաւոր առաջձ հայ թատրոնի պատմութեան։ Կը խնդրեմ որ հածիք Դուք ալ Զեր ազնիւ աջակցու-

թիւնը բերել ալս օգտակար ձեռնարկին՝ Ձեզի ծանօթ դերս-  
սաններու և դերասանուհիներու վրայ կինսագրական տեղե-  
կութիւններ առաջանաւ Ամ հաւաքոյթները ւետու պիտի հրատա-  
րակուին՝ Տեղեկատուներուն անունն ու մասնակցութեան շափն  
ալ լիշուելով.

Ակժմէն կը լալտնեմ չնորհակալիքս Ձեր բարեկօժար աշ-  
խատակցութեան համար և կը խնդրեմ որ ձեր պատասխան-  
ները հաճիք զրկել իմ հասցէիս որ ստորև է հարցարանին.

ՍՍԲԱՏ ԴԱԻԹԸԱՆ

Կ. Պոլիս. 1902.

1. Անուն, հայրանուն և մականուն: — 2. Ո՞ր և երր  
ծնած է: — 3. Ո՞ր դպրոցի մէջ ուսում առած է, և դպրոցին  
վերջ որ և է արհեստի կամ զործի հետեած է: — 4. Ո՞ր թուա-  
կանին և բնչպէս սկսած է դերասանութեան, և որ խումբին  
մէջ. (Ալդ առթիւ մասնաւոր պարագաներ և մանրագէպեր ու-  
նեցած է): — 5. Ո՞ր խաղի մէջ և բնչ զերով բեմ ելած է ա-  
ռաջին անդամ: — 6. Ակսուակութիւն շրջանը ու շափ, քանի-  
տարի տեսած է: — 7. Դերերու որ սեւին համար մասնաւոր  
հակում և ընդունակութիւն ունեցած է, և որ խաղերու մէջ  
լաջողակ եղած է: — 8. Անձնական նկարագիրը: — հասակ, ֆի-  
զիքական ուրիշ ձիրքեր, բարուական մասնաւոր լօժարութիւն-  
ներն ու ձգութմերը: Լուսանկարը հանուած է, և ուր կարելի  
է գտնել: — 9. Ի՞նչ բաններու հմուտ էր: Օտար լեզու գիտէր: — 10. Ի՞ր և է արհեստ սորված և մշակած էր, իրբ ապրուս-  
տի միջոց: — 11. Ո՞ր և է երկասիրութիւն կամ թարգմանու-  
թիւն ունեցած է, (գիրք, թատերախաղ, երգ, պարերգ, նալլ):  
տպեալ թէ անտիպ: — 12. Ո՞ր քաղաքները պատած է, և որ  
խումբի հւտ: — 13. Պարզ դերասան ըլլալէ ետք, վարիչ, թա-  
տերապետ, խմբապետ եալլն եղած է, երբ, ուրի: — 14. Ասպա-  
րէզէն հեռացած է երբեմն թէ միշտ զերասան մնացած է: —  
15. Ի՞ր թուականին մեռած է, և բնչ հրւանդութեամբ: — 16.  
Ո՞ւր թաղուած է: — 17. Ամուրի մեռած է թէ ամուսնացած: —  
18. Թուականին ամուսնացած է, որն հետ: Զաւակ ու-  
նեցած է, քանի, որն ք են: — 19. Իր դերակատարութեանց  
մասին քննադատութիւններ, իր կենսագրութեանէն մասներ հրա-  
տարակուած են. ուր և երբ: — 20. Իր կեանքէն մանրավէ-  
պեր, թեր ու դէմ կարծիքներ:

Այս հարցումներուն պատասխանը համեցէք դոր-  
կել առ

ՍՍԲԱՏ ԴԱԻԹԸԱՆ

Խօրպասաններան խան, Սիրքէնի

Կ. Պոլիս

**Դ. ՍԵՐԵԲՐԵԱՆՆԻԿԵԱՆԻ ԿՑԱԿԸ**

Քիւղանդիօն» լրագրին խամալելից ուղարկած մի թբդ-թակցութիւնից իմանում ենք, որ Ռումանիա հպատակ հանդ. Դրիգոր Սերեբրենիկովը կտակել է 40,000 ռուբլի, որ անձեռնմինելի պիտի մնայ Օդեսակի արքունական դրամատանը, իսկ տոկոսները տարեցարի պիտի բաշխուին հետևեալ համատառութիւններին, 24,000 ռ. տոկոսը՝ Վանի Հայկաղնեան և Սանդղատեան ուսումնարանին, 6000 ռ. տոկոսը՝ ս. Էջմիածնի մեմարանին, 6,000-ինը ս. Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցին և 4,000-ինը Օդեսակի ծխական զպրոցին:

Ամերակ կտակուած գումարը լանձնուած է արդէն Օդեսակի Դրիգոր ա. ք. Խորասաննեանին՝ Ազգիս վեհ. Հայրապետին ուղարկելու ի անորէնութիւն:

**ՌՈՒՍՍՅՑ ՍԵՐԻՆԱՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ**

«Մշակ» լրագրում կարդում ենք հետեւալը.

«Թագաւոր Կալսրը բարեհաճնց թարձրագոյն հաստատել ուսուաց մինօդի որոշումները առւսական հոգեոր սեմյնարիաների կանոնադրութեան 92-դ լոգուածը փոխելու մասին հետեւալ կերպով. «Մանկավարժական ժողովներում ներկայ են լինում, բէկտորի նախադահութեամբ, տեսուչը, դասատուները և երկու անդամ թեմական հոգեորականներից որոնց ընտրում է թեմական հոգեորականութիւնը և հաստատում է թեմակալ առաջնորդը երեք տարով. իսկ նոյն կանոնագրութեան 32-դ լոգուածը փոխել ալսպէս. «Ուսման և դաստիարակութեան վերաբերեալ հարցերի քննութեան ժամանակ վարչութեան ժողովներին մասնակցելու հրաւիրում են զպրոցի բոլոր դաստիարակները ձալնի հաւասար իրաւունքով վարչութեան միա անդամների հետո:

## ՍՐՈՒԵՍՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Հայնէի մողերից)

Հնդիկների վիպական բանաստեղծութիւնները նրանց պատմութիւնն են. բայց մենք կարող ենք օգտուել նրանցից, որպէս պատմութիւնից միան այն ժամանակ, երբ կղանենք օրէնքներ, որոնց շնորհիւ հնդիկները իրօք բանաստեղծական ֆանտաստիկական էին դարձնում. Ալդ չի աջողուել մեղ մինչև ազժմ լուների առասպելաբանութեան վերաբերմամբ. սակայն արտեղ բանը աւելի գծուարանում է, որովհետեւ լուները ալն ամենը, ինչպէս որ իրօք կատարուած է եղալ, «իշտ ձեարուեստական» (plastisch) ձևով առասպել էին մշակում, դարձնում, որ և աւելի ու աւելի որոշ էր դաւանում. Հնդիկների մէջ հնդիկառակն, ֆանտաստիկական մշակութիւնը (կերպարանափոխութիւնը) շարունակում է խորհրդանշան (symbole) մնալ, որ անվանմանը, անսահմանն է որոշում և որին բանաստեղծի ֆանտազիան չի կարող աւելի որոշ ձեներ տալ պլաստիկ կերպով:

Հնդիկը կարող էր միաէն հսկալական վէսեր ստեղծել, որովհետեւ նա, որպէս առ հասարակ պարզ դիտողութեան տէր մարդ չէր կարող ախարհի ընդհանուր կազմից որ և է մի մաս կտրել Ամբողջ աշխարհը նրա համար վիպական բանաստեղծութիւնն է, որի մէջ «Մահաբարաբատան» մի գլուխ է կազմում միան: Համեմատեցէք հնդկական միստիկան (խորհրդագոածութիւնը) մերի հետ. մերը վարժում է (սուր միտքը) նրբամութիւնը նիւթի լուծման, բաժանման և միշտ ցման համար, բայց նա չի կարող դաշափար կազմել: Պարզ դիտողութեան դաշափարները մեղ հայար բնաւ անծանօթ բաներ են: Հնդկական մուսան հէքեաթների երազող, ցնորքների մէջ խորասոցուած իշխանուհին է:

Որպէս առհասարակ իւրաքանչիւր մարդ զդալական աշխարհում նալում է որոշ առարկալի վերաչ իւր հալեցակէտով, նոյնպէս և իւրաքանչիւր մարդ մի լատնի, որոշ գրքի մէջ տեսնում է մի բան, որ մի ուրիշը ալլ կերպ է տեսնում: Հետանքար թարգմանիչը պէտք է խիստ խելացի և տաղանդաւոր մարդ լինի, որովհետեւ նա անհրաժեշտօրէն պէտք է թարգմանելի գրքի մէջ որոնի և տեսնի ամենից կարևոր և լաւագոյն բաները ալլ բոլորը ուրիշներին հաղորդելու համար: Խնագրի բառերը, մարմնական (արտաքին) միտքը կարող է իւրաքանչիւր ոք թարգմանել, ով որ քերականութիւնն է սովորել և մի բառարան ձեռք բերել: Բայց իւրաքանչիւր մարդ չի կարող թարգմանել ողին, հասկանալի դարձնել այն, թող ալլ բանը ի նկատի ունենալ Վալտեր Սկաստի բոմանների (վէպերի) ալն չոր ու ցամաք, պլոզակ (արձակ) թարգմանի:

չը, որ այնպէս պարծենում է իւր թարգմանութեանց ճշտութեամբ. ինչ է նշանակում թարգմանել, ճշդիւ տալ բնագրի ողին՝ կարելի է ամենից լաւ տեսնել Ֆօրսանքի ՕՍակունտաւալիւ կրկին, երկրորդ թարգմանութիւնից:

Ռումանտիկների ժամանակ սիրում էին ծաղիկը միայն իւր հոտի, բուրման համար. մեր ժամանակում մենք սիրում ենք ծաղիկի պատվզը. Այս պատճառով և սեր ձգուումը դէպի զործնակոնը, դէպի պրօզան, դէպի կրշտը և առօրեան:

Արուեստի մէջ նոր չըջան է երեան եկել. Բնութեան մէջ նոյն օրէնքներն են գտնում, որոնցով մեր մարդկացին ոգին և կառավարում է, նրանց մարդացնում են (նովալիս), մարդկալին ոգու մէջ բնութեան օրէնքներն են գտնում— մագնիսականութիւն, էլէքտրականութիւն, ձգողական և վանող բնեաներ (Հանրիխ Ֆոն-Կլաստ). Գեօթէն ցուց է տախա բնութեան և մարդու մէջ փոխադարձ լարաբերութիւն. Ծիլերը կատարելապէս ոգեպաշտ է (Spiritualist), նա հեռացնում է բնութիւնից, նա կանուի էսթետիկալի կողմանակից է:

Թարգ. Ա. ԵԳԻԳԻԱՐ

